Հիթ Լաուրի ի՞նչու կը փորձէ թալաքի եւ միւս երիտթուրք ցեղասպաններուն վարքը քարձրացնելու՝ վարկարկելով ղեկավար Մորգընթաուին ու նախագահ Ուիլսոնը, որովհետեւ ամէնէն առաջ եւ ամէնէն անկիւն կը նստեցնէ իր վարքը, եթէ... ունէր:

Մտորոք
29 մարտ, 1991



Հերթի Գունաթափանք «գրուցում» է աշխարհի նեղ լուսանկարների լեզվով

«Չափազանց վտանգավոր էր իրադրությունը և չնայած մեր հագին ունենիք անխոցելի ժիլետներ, բոլորիս անխտիր մտահոգում էր այն, որ վիրավորվելու դեպքում մինչև հիվանդանոց կարող էինք չհասցնել... Ոչ մի ապահով վայր չկար: Իսրայելի կողմից չդադարող ռմբակոծությունը արևմտյան Բեյրութում 20 000 քաղաքացիների մահվան պատճառ դարձավ», մտաբերում է նա վշտալից:

Սարապինի էր 47 ժամ անընդմեջ ջրի հոսքի դիտավորյալ խափանումը դեպի այդ շրջանը: «Այդ օրերին ավելի հեշտ էր, և ավելի էժան մի շիշ շոտլանդական վիսկի գնել, քան մաքուր ջուր ձեռք բերել: Նույն

Բանգլադեշ) 1970 թվականին տեղի ունեցած ցիլոնը, որը խլեց ավելի քան 1 միլիոն մարդկանց կյանքը: «Ես ակամատես եղա, թե ինչպես էին շնորհ պատահում մարդկանց դիակները: Ոչ ոք չփրկվեց: Քամու հզոր ալիքները բռնցիկ տարան բոլորին անխտիր»:

Լինելով աղետի վայր ժամանած առաջին լուսանկարիչներից մեկը, Գունաթափանքին հաջողվեց բոլորից առաջ լուսանկարել և երեւակել նկարները: Վեց օր անընդմեջ նրա նկարները չէին իջնում Ֆրանսիայի ամենահայտնի թերթերից մեկի՝ 6 միլիոն տպագրանակ ունեցող «Ֆրանս Սուարի» առաջին էջերից: Լոնդոնի «Դեյլի

երբ նա ախորժարեր ճաշի հոտն առավ, մտաբերել իր այդ սովորությունը և հաճախում էր ընկալել մեզ հետ: Քիչ հետո դեպի ինձ դառնալով ասաց. «Բո մասին լավ հիշատակություն նմ արել ի՞նչ գործում»: Գունաթափանքը, որը կատակով ընդունում է, թե ինքն ընում է լուսանկարչական ապարատը «ծոցին դրած», այսպես է մեկնաբանում իր մասնագիտությունը:

«Լուսանկարչությունը անբուժելի մի հիվանդություն է, վարակվեցիր՝ փրկություն չկա: Եթե ժամանակին գործողման չգնացիր, առիթը բաց կթողնես և դա կվճարի գործին»: Այս ատուժով նա հաճախ է լուսանկարում եղել ընտանիքը շտապ բողոն և

ԽՈՍՈՒՄ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

ՆԼՈՐԵՆՍ ՍԿՍՊՅԱՆ. ՄՍԿ-ում հավատարմագրված թղթակից

Պարսից ծոցի պատերազմի ամբողջ ընթացքում Գունաթափանքի արյունը եռում էր: «Մի կողմից մտահոգված էի հազարավոր անմեղ զոհերի դժբախտ ճակատագրով, մյուս կողմից, որպես լուսանկարիչ՝ մի կողմ թողնելով զգացմանը, ցանկանում էի դեպքերի վայրում լինել և «գրանցել» իրադարձությունները, աշխարհի մյուս մասերում ապրողներին դրանց հետ ծանոթացնելու նպատակով», ասում է նա:

Նիսկ հարեւան թաղամասի ռմբակոծությունը դարձավ երկրորդական խնդիր, քանի որ մարդիկ գիտեին, որ գնդակի հարվածից անմիջապես մահանալու են, իսկ կենդանուր խոնարհ կամ փչացած կերակուր ուտելու դեպքում ստիպված են երկար տանջվել մինչև որ թույլը կամ վարակը դանդաղորեն իրենց գործը տեսնեն: Համարյա միև-

թեւորաֆ» բերթի միջազգային համարում իր նկարները երեւացին կարելային գործակալության կատարած նկարների կողքին, մի քան, որ դրանցից առաջ երբեք չէր հաջողվել ոչ մի լուսանկարչի: «Ժամանակի տարրերումը երկու երկրների միջև իմ օգտին էր», խոստովանում է Հերթին, թեթե ծպտալով և աչքով անելով. «սակայն համեմատորեն նշեմ, որ իմ նկարները ամենալավն էին: Ես ամենամտեղին էի դեպքի վայրին և ամենադաճը»:

թաշել պատերազմի կամ քնական աղետի հետեւանքով ավերված շրջանները: Բուն անունով Հարություն Գունաթափանք, լուսանկարչական ապարատի հետ նրա առաջին ծանոթությունը կայացել է 6 տարեկան հասակում, մոր հսկողության տակ: Իսկ մասնագիտական գործունեությունն սկսել է 1952 թվականին Բեյրութում, աշխատանքի անցնելով ֆրանսերեն




Արեւելյան Պակիստան. ցիլոնի գոհը հաց մտրալիս

նույն բանն է կատարվում այժմ Բաղդադում, որտեղ դիտավորյալ ռմբակոծում են ջրի ամբարները»:

Նույնքան սարսափելի և սրտաճնկի էր Գունաթափանքի 1966 թվականի գործուղումը դեպի Վայթա (Էրզրումի և Արարատի միջև ընկած տարածություն Քուրդիստան), որտեղ Ռիխտերի սանդղակով 6.9 բալանոց երկրաշարժ էր տեղի ունեցել: «Շատ-շատերը խեղդամահ էին լինում ավազից ու փոշուց: Երբ տեսա, որ մի փոքրիկ աղջնակ իր 3 տարեկան քրոջ թուն էր հայտնաբերել փլատակների տակից... չդիմացա: Բայց արցունքներն այբերին՝ շարունակեցի լուսանկարել: Մի քուրդ լրագրողը մտեցավ այդ պահին ու հարցրեց ինձ, թե ինչու եմ լաց լինում: Ասացի, երեխան մնում է երեխա: Ում զավակն էլ լինի, մտեիկ բարեկամի թե օտարի, նա միևնույն ամենը էակն է»:

Լուսանկարչի «սխրագործության» ամենակարեւոր հատկանիշը՝ ապարատը ձեռքին պատրաստ պահած ճիշտ ժամանակին և ճիշտ վայրում գտնվելն է: Այնպես ինչպես պատահեց նրա հետ 1977 թվականին Արև Դհարիում: Առանց վայրկյան իսկ կորցնելու Հերթին տասնյակ անգամներ իր 300 միլիմետրանոց ոսպնակով նկարեց օդանավային պեծանգաման տեսարանը, որը տպագրվեց Լոնդոնի «Էյթմոմիստ» հանդեսի շապիկի առաջին էջում, «Պարի մաշ»-ի գույգ էջերում և գերմանական մի քանի պարբերականներում:



Լիբանան 1983. Իսրայելը ռմբակոծում է Արևմտյան Բեյրութը

«Փորձառությունը քեզ ոգեշնչում է և ուժ տալիս: Դու գտնում ես, որ դա հենց այն է, ինչ ցանկանում ես, որ լինի»:


Գունաթափանքը, որ Միջին Արևելքի համարյա բոլոր արբանյակներն լուսանկարել է, հատուկ վերաբերմունք ունի Հորդանանի Հուսեյն թագավորի նկատմամբ: «Ես լավ ընտանիքի հայր է, լավ օդաչու և վարորդ: Ծառ լավ գիտի ամբողջ շրջանը և խորը գիտակցում է, թե ինչի կարող է հասցնել ներկայիս մղվող Մոցի պատերազմը»:

լեզվով լույս տեսնող «Լ'Օրիան» և արաբերեն «ժարիդա» թերթերում: 1967-ին միանում է Ատաշիբիդ Պրես գործակալության լուսանկարիչների «ընտանիքին» և 1974-ին դառնում այդ ընտանիքի Միջին Արևելքում ծառայող անձնակազմի վարիչը: Նրա նախնիները եղել են երեւելի բժիշկներ և պատվելիներ՝ Կիլիկիայից: Նրանք հիմնադիրներն են եղել հայ բողոքական եկեղեցու, կառուցել են Քեսաբի եկեղեցին, որը համարվում է ճարտարապետական մի հրաշալի կոթող: «Ես ընտանիքի անասակ որդին եմ, լավ բողոքական չեմ», ասում է նա կատակով, «սիրում եմ խմել և լավ ժամանակ անցկացնել»:

Հետագայում միայն Գունաթափանքն իմացավ, որ տուժածների թվում կային նաև շատ հայեր:

Չոհրի քանակով առավել սարսափազդու էր Արեւելյան Պակիստանում (այժմ Բենգալ)

Ֆլյուրո, ֆրանսիական պողոտա, ավերակներ



Դեպի Թուրքիա կատարած մի այլ գործուղման ընթացքում նրան ընկերակցում է Բի-Բի-Սի-ի Միջին Արևելքի թղթակից Փիթեր Ֆլիներ, որն առաջարկում է նրան. «Քանի ժամանակ ունենք՝ արի գնանք «մեր Արարատը» տեսնենք»:

«Երեւի թե ինչ-որ ազդեցություն թողել էի նրա վրա», կատակում է Հերթին: «Մինչ մենք Արարատի ստորոտին նստած՝ հաց ու պանիր էինք ճաշակում, Ֆլիներ գրպանից հանելով մի հայկական մետաղադրամ նվիրեց ինձ, որպես հիշատակ: Դա իմ կյանքում ամենամուգիչ օրերից մեկն էր», նշում է նա:

Նման մի հիշատակելի հանդիպում, առավել ուրախ երանգով, նա ունեցել է Ռուսիայում Մարտյանի հետ Բեյրութում, 1972 թվականին: Մարտյանը այնտեղ էր ժամանել Հայկազյան Կոլեջի քաղցրահամ առիթով: Նախքան հանդիպությունը կսկսեր, Մարտյանին ուղեկցում են մի պատառ քան ուտելու: «Լսել էի, որ Մարտյանը չի խղճում», պատմում է Գունաթափանքը, «բայց

Իր հաջողությունների համար նա իրեն պարտական է համարում կեղծը՝ Աիդաին, որը 1950 թվականին, երբ ինքն անգործ էր մնացել, խորհուրդ էր տվել լուսանկարչական ապարատ գնել և գրավել լուսանկարչությանը: «48 ժամ հետո ես արդեն մշտական գործ ունեի», հիշում է նա:

Նա ավստաստեղով է խոսում արդի տեխնիկական հայտնագործությունների և դրանց կիրառման ոլորտի հետագա ընդլայնման մասին: «Մի օր դրանք իսկական լուսանկարիչներին դուրս են մղելու ասպարեզից: Ես երբեք ինքնաշխատառ չեմ օգտագործել, որովհետև հսկողացած եմ, որ արվեստագետը պետք է ուղեղն ու աչքը միաժամանակ օգտագործի, որպեսզի արդյունքը դուր գա բոլորին անխտիր»:

Իսկ ի՞նչ խորհուրդ է տալիս նա ապագա լուսանկարիչներին: «Լավ սովորեք, շատ փորձ ձեռք բերեք և ամենակարեւորը՝ համբերատար եղեք: Նկարը ի՞նչը, վաղ թե ուշ, կհասնի ձեր տընդան աշխատանքը»:

«Արծիւնք Ինքնընկերու Մեզըլին» AIM, փետրվար 1991

Նրա նկարները, որոնք շատ հաճախ տպագրվել են առաջին էջում, արժանացել են մի շարք մրցանակների, որոնց թվում կարելի է հիշատակել Ատաշիբիդ Պրեսի գործերի կասավարչի հուշատախտակը և Միջազգային լուսանկարչային լրատվության մրցանակը:

Նրա հիմար շրջադարձային կարելի է համարել 1982 թվականը, երբ որպես 15 հոգուց բաղկացած ֆոտոթղթակիցների խմբի ղեկավար շուրջ 2 ամիս գտնվում էր Բեյրութում: Իսրայելական ներխուժման ամենադժգոյակ օրերն էին դրանք, որոնք անընդմեջ տպավորություն թողնեցին նրա վրա, ոչ միայն այն պատճառով, որ այնտեղ էր մեծացել ևս մի նշան հիմա հարազատներ ունի, այլ նաև մահավաճ այն, որ այդ պատերազմը նրանցից ինչ իր ամենամտեղին գործընկերներին:

Մինչև օրս էլ նա չի կարողանում մոռանալ այն սրտաճնկիկ տեսարանները, որոնց ակամատես է եղել այդ շրջանում ոտարորիկ այն որը երեխային, որը վախից լաց էր լինում, վշտահար մորը, որն իր նորածին երեխայի մահը տեսնելով խնայազարկել էր, և հիվանդանոցում պսակած ջրն մարդուն, որն ակամատես էր լինում էր գետնին ընկած իր նոր անդամահատված ոտքին: «Կտիվն այնքան լայն ծավալ էր ստացել, որ ես նույնիսկ չկարողացա այցելել հորս գերեզմանը: Նա մահացել էր 1979 թվին իմ այնտեղից մեկնելուց անմիջապես հետո»:

Վտերան լուսանկարիչը հաճախ է կամավոր կերպով հայտնվել կրակի գծի աջ ու ձախ կողմերում հայ և արաբ ընտանիքներին հաց ու ալյուր հայթայթելու վեհ նպատակով: Մի անգամ էլ Ատաշիբիդ Պրեսի գրասենյակում նստած հազիվ է փրկվել հենց իր առջևից պացող փամփուշտից:

«Նյու Յորք թայմզ» օրաթերթն անդրադառնալով քրդերի 70-ամյա պայքարին, նշում է, որ իրաքյան քրդերի երկու խոշոր կազմակերպություններից մեկի ղեկավար Ջալալ Թալաբանին եռամյա ղեկավարությունից հետո, մարտի 26-ին, հաղթական վերադարձով Իրաքի հյուսիսում գտնվող Ջախտ քաղաքը: Թալաբանին ակնկալում է, որ օգտվելով վերջին շրջանում ձեռք բերած մի շարք հաջողություններից, կկարողանա շարժման մյուս ղեկավարներին, այդ թվում նաև քրդական երկրորդ խոշոր կազմակերպության ղեկավար Մասուդ Բարզանին կոչ անել բանակցելու ժամանակավոր կառավարություն ստեղծելու հարցի կապակցությամբ:

«Քրդերի հաջողությունների հիմնական երաշխիքներից մեկը,- ավելացնում է «Նյու Յորք թայմզ» թերթը,- այն է, որ Սադդամ Հուսեյնը ցայսօր միայն զբաղված էր նրկրի հարավային շրջաններում շիա մահմեդականներով բնակեցված ավելի քան 10 քաղաքներում բռնկված ապստամբությունների ճնշմամբ: Եւ, քանի որ ներկայումս բանակին հաջողվել է հարավային շրջանների հսկողությունը իր ձեռքը վերցնել, ըստ պատվում է, որ շուտով ուշադրությունը ուղղվելու է հյուսիս, վերջին 20 տարիների ընթացքում նախադեպը չունեցող այդ ապստամբությունը նույնպես կճնշի»:

Իրաքի 18 միլիոնանոց բնակչության շուրջ 20 տոկոսը կազմում է հնդկարապական ծագում ունեցող քուրդ ժողովուրդը: Նրանք հիմնականում պրոնախարհ են, եւ ունեն իրենց ուրույն լեզուն, մշակույթը եւ ավանդույթները: Քրդերը արարներից, թուրքերից եւ իրանցիներից հետո Իրաքի չորրորդ խոշոր էթնիկական խումբն են: 20 միլիոնանոց քուրդ ժողովուրդը ներկայումս բնակվում է Իրանի արևելյան շրջաններից սկսած մինչև Իրաքի եւ Թուրքիայի սահմանները ընդգրկող մի ընդարձակ աղեղնաձև տարածության վրա, ինչպես նաև համայնքներով՝ Սիրիայում եւ Խորհրդային Միությունում:

Ըստ «Նյու Յորք թայմզի», քրդերի ապստամբության ակունքները պետք է որոնել 1923 թվականին կնքված պայմանագրում, պայմանագիր, որն Օսմանյան կայսրության տրոհումից հետո, քրդերին տեղա-

կան ինքնավարության խոստում տվեց: Նույնիսկ ակնկալվում էր, որ Թուրքիայի արևելյան շրջաններում քրդերը կարող են անկախ պետականություն ստեղծել: Մասկան 1923 թ. Աբաթուրքի իշխանության գլուխ անցնելուց հետո եւ նրա կողմից որդեգրած խիստ ազգայնամոլական եւ այլազգիների ուժեղացման քաղաքականության հետեւանքով, այդ պայմանագիրը չիրագոր-

Մասուդ Բարզանիի մարտիկները ավելի կազմակերպված են, քան Թալաբանիին: 60-ամյա Ջալալ Թալաբանին ղեկավարում է «Փնջմարզ» կոչվող աշխարհագրաչափներին: Նախկին լրագրող եւ իրավաբան Թալաբանին վերջին տարիներին բրնակվում էր մերթ Դամասկոսում, մերթ Լոնդոնում: Նա ավելի շատ քաղաքական գործիչ է:

Քանը տված հարցազրույցի ժամանակ Թալաբանին նշել է, որ Իրաքի քրդերը ինքնավարության են ձգտում, այլ ոչ անկախություն: Իսկ Թուրքիայի քուրդ գործիչներն առաջվա պես մտադիր են ստեղծել անկախ պետականություն: Ըստ «Նյու Յորք թայմզ»-ի, քրդական ընդդիմությունը ոչ մի պարագայում չի համաձայնվի համագործակցել Սադդամի կա-

ՉԱԼԱԼ ԹԱԼԱԲԱՆԻՆ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԻՐԱՔ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ, Իրանագետ

ժվեց: Իսկ Լոզանի պայմանագիրն ընդհանրապես չանդրադարձավ քրդական հարցին:

Քրդական ընդդիմությունը,- ավելացնում



է թերթը,- հիմնականում բաղկացած է երկու խմբերից՝ Մասուդ Բարզանիի ղեկավարած «Քրդական ղեմակրատական կուսակցությունից» եւ Ջալալ Թալաբանիի «Քրդիստանի նայրենասիրական միություն» կազմակերպություններից: 40-ամյա Մասուդ Բարզանին քրդական շարժման հայտնի առաջնորդ Մուստաֆա Բարզանիի որդին է: Վերջինս 1946 թ. խորհրդային բանակի օժանդակությամբ Իրանի հյուսիսում ստեղծել էր «Մամաբադի քրդական հանրապետություն» կոչվող կազմավորումը, որի գոյությունը սակայն կարճատև էր:

Քրդական կազմակերպությունների եւ խմբավորումների միջև եղած տարածայնություններն ավելի շատ անձնական եւ «աշխարհագրական» բնույթ ունեն, քան գաղափարական: Վերջին տարիների ընթացքում վերը նշված կազմակերպությունները տարածայնություններ վերացնելու եւ միացյալ ճակատ ստեղծելու ուղղությամբ որոշակի քայլեր են արել, եւ 1987 թ. մյուս փոքր կուսակցությունների՝ սոցիալիստների, կոմունիստների եւ մարքսիստների մասնակցությամբ հիմնել են «Իրաքյան Քրդիստանի» ճակատը, որը ղեկավարվում է թե՛ Մասուդ Բարզանիի եւ թե՛ Ջալալ Թալաբանիի կողմից: Վերջերս Դամասկոսում ստեղծված հակաիրաքյան հանրահանուր ընդդիմության մեզ երկուսն էլ ունեն իրենց ներկայացուցիչները:

«Նյու Յորք թայմզը» ծանուցում է, որ ընթացիկ ամսվա սկզբներին, երբ Թուրքիայի ղեկավարները հրաժարվեցին քրդերի նկատմամբ նախկինում որդեգրած քաղաքականությունից եւ համաձայնվեցին հանդիպում ունենալ քրդական շարժման ղեկավարների հետ, Թուրքիայում կայացած այդ հանդիպմանը ներկա գտնվեցին Ջալալ Թալաբանին եւ Մասուդ Բարզանիի ղեկավարած կազմակերպության ներկայացուցիչը:

Ըստ «Նյու Յորք թայմզի», Իրաքի քրդերը տարիների ընթացքում զգալիորեն մեղմացրել են իրենց պահանջատիրության չափերը, եւ համոզվելով, որ անկախության գաղափարը անհեռանկարային է, համաձայնվել են քավարարվել լոկ ինքնավարությամբ: Հենց այդ նկատի ունենալով՝ մարտի 31-ին Թուրքիայի հեռուստատեսու-

նավարության հետ: Այնուհետեւ, «Նյու Յորք թայմզը» անդրադառնալով քրդական շարժման պատմությանը, ավելացնում է, որ 1970 թ., ըստ մի պայմանագրի, քրդերը Իրաքում ստացան տեղական ինքնավարության եւ դպրոցներում մայրենիի ուսուցման իրավունք:

Սակայն այդ պայմանագիրը չծառայեց իր նպատակին, եւ քրդերը Իրանի, Իսրայելի եւ ԿՀՎ-ի դրոյմամբ մեկ անգամ եւս 1974 թ. ապստամբեցին: Ապստամբությունը ճնշելու եւ Իրանի միջատությունը չնգրացնելու համար Սադդամը Իրանի միապետ Մոհամադ Ռզա Փեհլևիի հետ առաջարկեց մի փաստաթուղթ, որը կոչվեց «Ալժիրի համաձայնագիր»:

Քրդական ապստամբությունը ճնշվեց, եւ զառաջյալ Մուստաֆա Բարզանին տեղափոխվեց ԱՄՆ, ուր մահացավ 1979 թ.:

Իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում Սադդամը քուրդ ապստամբների հետ դաժան հաշվեհարդար տեսավ, կիրառելով քիմիական զենք՝ կոտորածի ենթարկեց խաղաղ ազգաբնակչությանը եւ հողին հավասարեցրեց քրդաբնակ ավաններն ու գյուղերը՝ պատճառ դառնալով քրդերի տեղահանությանն ու տարագրմանը:

Այժմ,- ներառված է «Նյու Յորք թայմզը»,- Մոցի պատերազմից հետո Իրաքում ստեղծված խառնակ իրավիճակում, քրդական ընդդիմությունը տասնյակ տարիների ընթացքում հետապնդած նպատակն իրականացնելու համար պատեն առիթ է ձեռք բերել:

ՄԱՐՁԱԿԱՆ

«ՈՒՐԱՐՏՈՒՆ»Ն ԳԼԽԱՎՈՐ ԹԵԿՆԱԾՈՒ

Սկսվեց բակետորդի տղամարդկանց ԽՍՀՄ երկրորդ խմբի առաջնության 8 ուժեղագույն թիմերի եզրափակիչ մրցաշարը: Երեսուկի «Ուրարտու»-ն առաջին փնջային մրցաշարը անկապրեց Խարկովում: Մեր թիմը առաջին տուրում 67:83 հաշվով փնջեց Լենինգրադի «Սվետլանա»-ին, որի կազմում հանդես են գալիս բարձրագույն խմբի բոլոր անկախ մի շարք խաղացողներ: Մասնավորապես վերջերս «Սվետլանա»-ն համարել է բարձրագույն խմբի առաջատարներից մեկի՝ Լենինգրադի «Սպարտակի» կեստրոնական խաղացող Միխայիլ Սիլախտեը (210սմ):

Երկրորդ տուրում «Ուրարտու»-ն 85:83 հաշվով կարեւոր հաղթանակ տարավ խաղահրապարակի տերերի նկատմամբ, իսկ վերջին տուրում «Ուրարտու»-ի առավելությունը Միխայիլի քաղաքի հավաքականի նկատմամբ ավելի քան համոզիչ էր (106:68): Կարեւոր էր նաև Խարկով-Լենինգրադ մրցավեճը: 107:91 հաշվով հաղթեց «Սվետլանան»:

Երկրորդ փնջային մրցաշարը կայանալու է Ստավրոպոլում եւ անկապվելու ապրիլի 11-ից 14-ը: Մեր թիմը երկուական անգամ մրցելու է Ստավրոպոլի եւ Բաքվի հավաքականների հետ: □

«ԿՈՏԱՅԵԻ» ԽԱՂԱՅԱՆԿԸ

Ապրիլի 5-ին կսկսվի նաև ֆուտբոլի ԽՍՀՄ առաջին խմբի առաջնությունը: Անա «Կոտայք»-ի մասնակցությամբ առաջին շրջանի խաղացանկը.

Ապրիլ

- 5-ին՝ Կոտայք - Նեֆթչի (Բաքու)
- 8-ին՝ Կոտայք - Գինամո (Մոխում)
- 16-ին՝ Գեղուգ (Տյումեն) - Կոտայք

«ՄՈՆԴԵԼԻԵ»-Ի ՀԱՅԱՋԳԻ ՂԱՇՂԱՆԸ

Ֆուտբոլասերները տեղյակ են, որ «Արարատ»-ի նախկին երկու խաղացողներ հիմա հանդես են գալիս ֆրանսիական թիմերում. Համելտ Միթթարյանը խաղում է երրորդ դիվիզիոնը ներկայացնող «Վալանս» թիմում, Արթուր Գեմրեյանը երկրորդ դիվիզիոնի «Կրեմոն» ակումբում:

Իսկ անա ոչ բոլորը գիտեն, որ ֆրանսիական ֆուտբոլի առաջին դիվիզիոնի (բարձրագույն խումբ) առաջնություններին մասնակցում է երեսուցի եւ մեկ ֆուտբոլիստ՝ Միքայել Տեր-Չաքարյանը, որը վաղուց ծնողների հետ տեղափոխվել է Ֆրանսիա: Միքայել Տեր-Չաքարյանը սկզբից

- 19-ին՝ Ուրադաշ (Սվերլովսկ) - Կոտայք
 - 25-ին՝ Կոտայք - Չենիթ (Լենինգրադ)
 - 28-ին՝ Կոտայք - Գուուգավա (Ռիգա)
- Մայիս
- 7-ին՝ Ռոտոր (Վոլգոգրադ) - Կոտայք
 - 10-ին՝ Կայրաթ (Ալմա-Աթա) - Կոտայք
 - 17-ին՝ Կոտայք - Կուրան (Կրասնոդար)
 - 20-ին՝ Կոտայք - Ռոստանվաշ (Կոնի-Ռոստով)
 - 27-ին՝ Տավրիա (Միմֆերոպոլ) - Կոտայք
 - 30-ին՝ Տիրաս (Տիրասպոլ) - Կոտայք

- 7-ին՝ Կոտայք - Գինամո (Ստավրոպոլ)
 - 17-ին՝ Կոտայք - Չիմբրուլ (Քիշնեւ)
 - 20-ին՝ Կոտայք - Բուկովինա (Չերնովցի)
 - 27-ին՝ Տեքստիլչիկ (Կամիշին) - Կոտայք
 - 30-ին՝ Ֆակել (Վորոնեժ) - Կոտայք
- Ղուլիս
- 8-ին՝ Կոտայք - Նեֆտյաննիկ (Ֆերգանա)
 - 11-ին՝ Կոտայք - Նովրաճոր (Նամանգան)
 - 16-ին՝ Շիննիկ (Ցարսկայա) - Կոտայք
 - 19-ին՝ Լոկոմոտիվ (Ն. Նովոգր.) - Կոտայք



Լուսանյալը. «ՄՈՆ»-ի

հանդես էր գալիս «Նանտ» պրոֆեսիոնալ հանրահայտ թիմում, իսկ 1988 թվականից

ելույթ է ունենում «Մոնպոլի» թիմում, որը այդ տարի վերադառնալով առաջին դիվիզիոն, ոչ միայն գրավեց մրցանակային երրորդ տեղը, այլև նվաճեց Ֆրանսիայի գավաթը: Տեր-Չաքարյանը առաջինի կազմավորված ֆուտբոլիստ է, նրա հասակը է 180 սմ, քաշը 79 կգ: Միքայել Տեր-Չաքարյանը ծնվել է 1963 թվականի փետրվարի 18-ին Երևանում: Ֆրանսիայի նախորդ առաջնությունում (բարձրագույն խումբ) «Մոնպոլի»-ն անհաջող հանդես եկավ եւ քավարարվեց ընդամենը 13-րդ տեղով: Նկարում՝ Տեր-Չաքարյանը իր թիմակիցներ կոլտրիսի հանրահայտ ֆուտբոլիստ Վալդերրամայի, Ֆուլիքեզեի եւ Նոնյի կողքին: □

Բաժինը վարում է Մ. ԲԱԳՂԱՍՏՐՅԱՆԸ

շարունակություն 1-ին էջից

ձավառնիկ		
հեղկայորեն		
(գրեչկա)	0.56	1.68
բրինձ	0.88	2.20
կորեկածավար	0.30	1.00
մակարոն	0.58	1.60
շաքարավազ	0.85	2.00
բուսական յուղ		
արեւածաղկի	1.70	3.40
մարգարին	1.50	3.00
թեյ	9.60	18.00
հաց	0.24	0.61
	0.19	0.60
	0.49	1.03

Արդյունաբերական ապրանքներ շիթ (լայն. 1մ) 1.12 3.00

քյազ (լայն. 80 սմ)	1.05	2.40
պոպլին (լայնութ. 80 սմ)	2.00	4.20
Տղամարդու		
մայլա	1.34	4.70
կիսազուպա	1.40	1.40
վերնաշապիկ	8.60	16.50
կոստյում քրոյա	230	575
կոստյում կիսաքրոյա (Լեհ)	150	375
ջիւսեր (կապ. երկրների)	135	338
կիսակոշիկ	40	76
	60	150
Կանայի		
գուլպա	3	3
բարձրակրունկ կոշիկ	45	85
	65	162.50
երկարաճիտ կոշիկ	130	325
երեխայի		
ջեմպեր (36 շափ)	12.50	59
գուլպա (ռետուլ)	1.60	4.50

վզեստ քրոյա (38 շափ)	12	62
կոշիկներ	8.50	21.50
հողաթափ	0.85	5.00
մուշտակ (28 շափ)	46	175
տետր	0.02	0.12
Լվայքի մեքենաներ		
CMP-1,5	80	165
«Մայլուտկա»	32	100
լվայքի փոշի «Լոսոս»	1.00	2.60
Մասերաններ		
«Մարտով»	250	430
«Միսկ»	455	900
Փռնածիլներ		
«Չայկա»	63	175
«Ռակետա»	49	69
Դեռուստայույներ		
«Ռուբին» գունավոր	755	1218
«Ռեկորդ» սև-սպիտակ	240	440
Ռադիոընդունիչներ		

«Օկեան»	135	207
VEF-260	270	357
Մոտոցիկլներ		
«Միսկ»	620	840
«Վոստոկ»	495	1100
հեծանիվ (դեռահասի)	71	130
Սկտոմեքենաներ		
«Օկա»	3500	8000
«Տավրիա»	5450	12.000
«Վազ-2105»	8500	16.500
«Վազ-2107»	9720	18.000
«Վազ-2108»	8500	16.500
«Վազ-2109»	9000	17.500
«Նիվա»	9000	20.000
«Մոսկվիչ 2141-01»	12.100	20.000
«Մոսկվիչ 412»	7100	12.000
«Չայ 968»	3900	6240
«Գազ 24-10»	16.200	30.000
«Գազ 24-12»	19.400	35.000

ԻՆՏԵՆՍԻՎԱՍՅԱՆ ՎՈՅՅՐՈՒՄ

Հայ մամուլի դարավոր պատմության մեջ հավաղեցվել են այն պարբերականները, որոնք արդեն մոտենում են իրենց հարյուրամյակին: Այդ երկարակյացներից է Ռամկավար ազատական կուսակցության խոսնակ «Պայքար» շաբաթաթերթը, որի 90-ամյակը լրացավ անյայտ տարի: Մաքառում հատուկ հայ ազգային կյանքի համախմբման, սերունդների հայեցի դաստիարակության, Սփյուռքի ազգային-քաղաքական պարթևների, հայոց դպրոցի շարունակելիության, հայ մարդու հոգևոր աշխարհի հարստացման, մեր պատմական հիշողությունների և հայրենակարոտ ու հայրենասեր զգայմունքների պահպանման, ահա թերթի երկարամյա պայքարի գլխավոր ուղղությունները:

Արժեք այսօր անուն ամ անուն հիշել «Պայքարի» խմբագիրներին, որոնք դժվարին պայմաններում կատարեցին իրենց հայրենակերպ առաքելությունը: Ա. Նազար, Ե. Մեսիայան, Գ. Երվանդ, Ա. Փուլատյան, Ա. Աղդաբաջյան, Նուբար Պերպերյան, 1982-ից ի վեր Գ. Զեռնույան:


«Պայքարը» Սփյուռքի և հայրենիքի բազում եղբայրների հետ, ուղեկցորդ դարձավ հարազատ ժողովրդին դժվարին 20-րդ դարում՝ երբ հետ կիսելով ուրախություն և վիշտ, երբ հետ երազվելով, տրեւելով և խոկալով:

Նորածին «Ազգ» թերթը շնորհավորում է իր վաղա՛ք եղբորը՝ հպարտանալով նրա դարակամիկ գործունեությանը:

ԱՊՐԵՑ 100 ՏԱՐԻ

ՌՈՒԲԵՆ ՈՐԱՍԲՅԱՆ՝ հայ կերպարվեստագիտության նահապետը, Հայաստանի պետական պատկերասրահի հիմնադիրը, 20-րդ դարի ամենազարգացած և պրոֆեսիոնալ քանդակագործներից մեկը, որ այսօր արդեն պատմություն է, սակայն շարունակվող, ուսուցանող և գործող պատմություն:

1924-ին մեծն Ալեքսանդր Թամանյանի հրավերով Լենինգրադից գալով Երևան, նա իր արդեն հարուստ գիտելիքներն ու կերպարվեստի վարժանալի նոր ու ընդգրկուն զգացողությունները, որոնք մշակվել էին ռուսական ու համաշխարհային արվեստի և իր իսկ ներքին, բնական հայացքի ազդեցությամբ, ի սպաս դրեց «հոգևոր Հայաստանի» կառուցմանը՝ ժամանակի հաշիվով: Մեծագույն գրողների ու արվեստագետների հետ միասին:



Ռ. Որստյանը կերպարվեստի մեծ գիտակ էր և մեկնիչ: Նա իր ամբողջ կյանքում շեղծեց ու շեղծեց գիտական և քանդակագործի իր բառը, եղավ նորի ու առաջադիմության ջատագով, ծերունական շրջանում նույնիսկ ապրեց տաղանդավոր երիտասարդության հետ: Նրա «Եղիշե Թաղեույան», «Մարտիրոս Սարյան», «Հակոբ Կոչոյան», «Բաժբուկ Մելիքյան», «Հակոբ Գյուրջյան» մենագրությունները, «Հայաստանի պետական պատկերասրահ» աշխատությունը, հարյուրավոր քանդակատեսակներն ակնարկներն ու հոդվածները կանգուն-մնայուն են հայ կերպարվեստագիտությանը, նրա հետագա զարգացման ու հարստացման հիմք ու երաշխիք:

Օրերս հայ մտավորականությունն ու արվեստասեր հասարակությունը հրաժեշտ տվեց դարի մարդուն, որն իր ամբողջ կյանքը նվիրեց հարազատ ժողովրդի հոգևոր պարթևներին:

Մեր և նրա՛ք Անդրանիկ Մառուկյանի գրողական աշխարհի խորհրդանշանը են, որոնց միջև կանգնած է կարտառը: Նա կարտառում է անեղծ մարդկային սիրտ ու երազի կրակները, որոնք երբեք անկասած են իր և հարազատ ժողովրդի հոգում:

Ինչպես նշել ենք մեր թերթի նախորդ «Մշակույթ» էջում, «Շիրակ» ամսագրի 1990 թ. հունիս-հուլիսի համարը գրեթե ամբողջովին նվիրված է Մառուկյանի հիշատակին, տպագրված են պատմափյուն գրողի ստեղծագործությունից, գրույցներ և հուշեր, քննական հոդվածներ ու ակնարկներ նրա մասին, արդեն պատմություն դարձած լուսանկարներ: Կաշառիչ է խմբագրության նման զննահատությունն ու հարգանքը մեր նորագույն գրականության դասակարգի հանդեպ, ընդօրինակության արժանի գործ՝ փոխադարձվող զննահատանքով:

Ա. Միսաքեանը իր խոսքը վերնագրել է՝ «Սերունդը, որ կ'երթայ»: Մա փաստացի մի իրողություն է, սակայն անառարկելի է նաև այն, որ այդ սերունդը շարունակում է մնալ և ապրել մեզ հետ իր լավագույն դեմքերով, որոնցից մեկն էլ Անդրանիկ


ՄԻՐՈՒՆ ԵՒ ԵՐԱԶՅԻ ՄԱՐԳԸ

Մառուկյանն է: Նա շարունակվում է իր սիրով, երազով և կարոտով:

Ջափազանց հուզիչ է Արմեն Դարյանի՝ ես մի անցյալ-ներկա պաշտամուտն, քանախոսությունը՝ Մառուկյանի ծննդյան 70-ամյակին և նրա հոգեզավակ «Նաչիրի» պարբերականի 40-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունում:

Հ. Ալլահվերտյանի և Լ. Վարդանի հուշավատումները, Թ. Թորանյանի երկխոսությունը, Պ. Աղպաշյանի ու Ա. Սեփեթյանի վերլուծումները պարունակում են

նոր հայացք ու նկատումներ տաղանդավոր գրողի ու խմբագրի վերաբերյալ, նրան պատկերակերպում որքան պարզ, նույնպիսի էլ խորն ու խոհական նկարագրով՝ ինչպես իր կյանքն էր և գործը:



Արշակյանը Անդրանիկ ՔՈՒՄԻԻ երեւան, 1957թ.

Անդրանիկ Մառուկյանը ծնեցրեց և ծաղկեցրեց հայ մամուլի այգեստանի ամենականա՛ծ ծառերից մեկը՝ «Նաչիրին», որի շուրթի տակ հայրենասիրության, գրի ու գրականության, գեղեցիկի դպրոց անցանք քաղաքի սերունդները:

Մառուկյանի գեղարվեստական ժառանգությունը պատկանում է արդի հայ գրականության զանազանի:

Նա մնալով հայրենիքից հեռու, հայրենիքը իր մեջ՝ իր ժողովրդի նման հավերժական կարոտներից երկվեղկված:

ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ԿՈՒՄԱՅՐԻՈՒՄ

Հանդիսատեսը միշտ ակնկալիքներով է մայում թատրոնին և եթե նույնիսկ հիասթափվում է նրանից, որ հատկապես այսօր հազվագեղ երեւույթ չէ, դարձյալ շարունակում է նրան սիրել: Թատրոնի միջազգային օրը նաև հանդիսատեսի սիրտ օրն է, և այդ սերը պիտի որ քնքրեցնի թատրոնի պատասխանատվությունը՝ նրան մղելով լուրջ ստեղծագործական որոնումներին: Դա, միաժամանակ, օրն է տարբեր թատրոնների համագործակցության անհրաժեշտության գիտակցումի՝ միասնաբար որոնելու դեպի հանդիսատեսի հուզաշխարհը տանող ուղիները և հասնելու ժամանակակից դեմք ու նկարագրի ունեցող թատերական արվեստի մակարդակին:

Մարտի 27-ի երեկոյան տիպոր Կումայրի քաղաքն ասես մոռացել էր իր ավերակները և շտապում էր Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն, որտեղ «Միջազգային օրը» արժեքավորվելու էր նոր բնագործությամբ: Շուտով լեփ-լեցուն դահլիճը հանդիսատես դարձավ դրամատուրգ Ժորա Հարությունյանի «Մեր այս տարիքում» կատակերգական դրամայի գործողություններին և մեղմեց դրանց՝ անկեղծ, անմիջական ծիծաղ-թախիծով:


Ժ. Հարությունյանը նոր հնդիսակ չէ հարուստ ավանդույթներ ունեցող այս թատրոնում, անցած տարիներին այստեղ բնական կերպավորում են ստացել նրա «Մաղիկների աշխարհում», «Ղազարը զբնում է պատերազմ», «Քո վերջին հանգրվանը», «Խաչմերուկ» և ուրիշ պիեսների արվածքը թողնելով ոչ միայն թատրոնի ստեղծագործական ճանապարհին, այ-

լն և հազարավոր կումայրեցիների զգացմունքներում:

Ի՞նչ է տեղի ունենում «Մեր այս տարիքում», հերոսներն ապրում են և վերապրում ժամանակակից իրականության դրամատիկական տարրերում, փորձում զննահատել անցյալն ու ներկան, արտահայտել իրենք քաղաքացիական դիրքորոշումն այսօր տեղի ունեցող սոցիալական, ազգային, քաղաքական երեւույթների հանդեպ, ցավով, անհաշտորեն պայքարել կյանքի քաղաքական գործողությունների դեմ, վերկանգնել իշխող անարդարականությունից՝ ռոմանտիկորեն հավատացած, թե միայն հոգևոր ու քաղաքական արժեքներն են ի վերջո հաղթելու:

Բնագործությունն իրականացրել է թատրոնի գեղարվեստական ղեկավար Հակոբ Ղազանչյանը՝ դիմելով վառ, հյութեղ թատերական միջոցների, երեւակայության արտահայտիչ խաղերի, խորությամբ ընկալելով դրամատուրգի անկեղծ: Դերասանական ամբողջ խումբը հանդես է գալիս ոգեւորված և անմնացող նվիրումով:

Վ. Աճեմյանի անվան թատրոնը «Միջազգային օրը» նշեց լավագույն ձևով, օրինակ հուշելով հայ մյուս թատրոններին: Իսկ հանդիսատեսի ջերմ վերաբերմունքը նշան էր այն բանի, որ «Մեր այս տարիքում» ներկայացմանը սպասում է տեսական կյանք:



«Իբրև անհրաժեշտ առարկա՝ նախ մտուցելք գիրքը ձեր պաւակներուն առօրեայ աշխարհին մէջ, եւ ձեր վերաբերումը գիրքին հանդէպ թող դառնայ անոնց ուղեցոյցը կեանքին մէջ, ինչպէս բոլոր նուիրական բաներուն, ինչպէս հային, խաչին...»:

ՀԱՄԱՌՈՑ ՄՅՈՒՆԱԿ

— Հայաստանի կինոկրթության գործիչների և կինոյի բարեկամների հանրապետական ընկերության նախաձեռնությամբ երևանում սկսեց լույս տեսնել «Նոր թերթ» «Կինո», որի խմբագիրն է երիտասարդ կինոգետ, գրող Դավիթ Մուրադյանը: Թերթն իր անդրանիկ համարում տպագրել է կինոյի «հրաշագործ-կախարհներից» մեկի՝ Ս. Փարաշանովի՝ մեծադիր լուսանկարը, Վ. Գոդելի բանաստեղծությունները Ալ. Թուֆչյանի քարգմանությամբ, հաղորդել էջեր Շարլ Ազնավուրի ընտանական պատմությունից, ներկայացրել աշխարհաբնական Մառա Բեռնարի խաղերը Մաքս Մաքսուտյանին, որը եղել է ոչ միայն թատրոնի, այլև կինոյի աստղ: Տպագրված են նաև կինոքննադատներ Ս. Հասմիկյանի և Մ. Ստամբուլյանի հոդվածները:

— Լուս Աճեմյան, 1990 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, Թեքստան մշակութային միության նախաձեռնությամբ կազմակերպվել է ճանաչված նկարիչ Բյուզանդ Կոճանյանի ցուցահանդեսը՝ նվիրված իր ծննդեան 80-ամյակին: Ծարտարապետ և արվեստագետ Ս. Թուֆչյանը վարպետի մասին այսպես է արտահայտվել. «...Ան կը հատուցայ, թէ ազատօրէն ընտրուած նկարչական քեման կրնայ հարազատ ըլլալ միայն այն ատեն, երբ ազգային, ժողովրդային ու մարդկայնական է իր բնութիւնը, եւ թէ արուեստի գործը վաներական կրնայ ըլլալ այն ատեն, երբ արուեստագէտը անկեղծութեամբ կ'արտայայտէ իր յոյսերներն ու զգացումները՝ առանց կողմնակի նկատումներու»:

— Հայաստանի հեռուստատեսությունը հիմնադրել է նոր հաղորդաշար՝ «Օպերային թատրոն»: Մարտի 17-ին տեղի ունեցավ առաջին հաղորդումը՝ նվիրված հայ և համաշխարհային ճշմարտապետ օպերային երգիչներին: Առաջիկայում հաղորդումներ կտրվեն նաև արվեստի այս ճյուղի կոմպոզիտորների, դիրիժորների, բեմադրիչների, նկարիչների մասին: Հաղորդաշարի հեղինակը և վարողը Հայաստանի ժողովրդական արտիստ, Ալ. Մալեղիարյանի անվան օպերային թատրոնի գեղարվեստական ղեկավար Տիգրան Լեւոնյանն է: Առաջին հաղորդումն անցավ քաղաքի մակարդակով՝ հոգևոր և գեղագիտական բավականություն պատճառելով հեռուստադիտողին:

— Արցախի զինվորական իշխանությունները արգելել են Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի «Արա Գեղեցիկ» ներկայացումը, որն ունի հայրենասիրական բովանդակություն: Պարզ է, Արցախում հայրենասիրությունը զենքով բռնադատված զգացմունք է:

— Ինչպես հաղորդում են լրատվական գործակալությունները, Մոսկվայի Բելոուսական կայարանի ավտոմատ պահոցներից մեկում հայտնաբերվել են անցյալ տարվա աշնանը Մ. Մարյանի տուն-թանգարանից առեւանգված չորս գեղանկարչական աշխատանքներից երեքը՝ «Մաղկած ծիրաններ», «Արարածը և Հովիտի մեջ», «Գրող Իլյա Լեոնտովի գիմնակարը»: Չորրորդի՝ «Աշտարակի» ճակատագիրը դեռևս անհայտ է: Չեղբայրվել են երկու քաղաքացիներ: Նկարները վերադարձվել են տուն-թանգարանին: Երկարատև վերականգնողական աշխատանքներ են հարկավոր՝ դերանք այցելուներին դարձյալ ներկայացնելու համար:

Էջի պատասխանատու՝ ՆՈՐԱԾՐ ԱՊԱՆԱՆ


ՀՀԸ ՆԱԽԱԳԱՅԸ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ Է

մամլոս ասուլիս

Մարտի 30-ին կայացավ ՀՀԸ վարչության մամլո ասուլիս, որին մասնակցում էին վարչության նախագահ, Վ. Սիրադեղյանը, վարչության անդամներ՝ Շ. Քոչարյանը, Հ. Գալստյանը, Բ. Արարքյանը:

Մեր բերքի նախորդ համարում անդրադարձել էինք մարտի 23-ի հանրահավաքում Վ. Սիրադեղյանի այն հայտարարությանը, որ նա դիկտատուրայի կոչ էր անում: Մեր բողոքից Գուրգեն Խաճակյանը խնդրեց պարզաբանումներ տալ:

Վ.ՍԻՐԱԴԵՂՅԱՆ. Էլի ասաջարկներ էին եղել, որ վարչությունը հայտարարությանը հանդես գալու էր նախապես խոսքերից, կամ պարզաբանում մտցնելու: Դրա կարիքը վարչությունը չի զգացել, թե չէ մինչև հիմա հանդես եկած կլինեք: Ասեմ, թե ինչի մասին է խոսքը եղել: Բառացիորեն ասվել է, որ եթե հիմա խորհրդարանի դեմ գնում է վարկաբեկիչ պայքար, եթե քաղաքական որոշ հոսանքներ, խմբեր կամ անհատներ չեն ընդունում ժողովրդավարական հաստատությունները ու դրանց դեմ են գնում, թուլացնում պայքարները, դրանով նրանք նպաստում են, որ գործադիր իշխանությունները (իսկ հիմա ՀՀԸ-ն է իշխանության գլուխ) գնան դեպի դիկտատուրա: Բայց մենք դա չենք ուզում, ինչի մասին ես հայտարարել եմ: Ես եթե Հայաստանում այդպիսի բան քննադատի, ապա մեղավոր կլինեմ այն ուժերը, որոնք գնում են խորհրդարանի, ժողովրդավարական հաստատությունների դեմ: Համարել եմ, որ հակապառլամենտական այդպիսի մեծ պայքարի հավանական էլքը կարող է դրան հանգեցնել: Ես չեմ հավատում, որ այդպիսի ուժեր կան, ասվածը թիչ հավանական, բայց հնարավոր տարբերակ է: Կրկնում եմ, եթե այդ ուժերի գործունեության շնորհիվ խորհրդարանն այնպես չըլինի, չգործի, ապա կգործի գործադիր իշխանությունը, իսկ դա ինքնին դիկտատուրա է: Անձամբ ես չեմ ուզի այդպիսի բան, որովհետև իմ ամբողջ կյանքում երազել եմ ժողովրդավարական Հայաստան: Ծառածանր մասնակցած այս երեք տարիներին աշխատել եմ ամեն ինչ անել, որ խորհրդարանը ժողովուրդը ընտրի եւ այն ընտրվի է: Ես մեծ վախ ունեմ, որ գործադիր մարմինների ճեղքում իշխանության կենտրոնացում լինի, որովհետև ես ժողովուրդն է ինքնիշխան զորքը, այս խորհրդային համակարգն է նպաստում դրան: Ես եթե խորհրդարանը, նույնիսկ այս նորմալ ճանապարհով գնալով, իր վերահսկողական ֆունկցիան կատարել գործի չի կարողանում, որովհետև լծակներ չունի գործադիր մարմինների վրա լավ ազդելու ու եթե այդ պայմաններում, երբ գործադիր մարմինների կողմից իշխանությունը կենտրոնացնելու



բայց ամեն դեպքում խոսքը գնում է պետական գործադիր իշխանությունների մասին:

Գ. ԽԱՃԱԿՅԱՆ. Ժողովրդի մեջ խոսակցություններ են գնում, ոմանք էլ արդեն զոհունակությամբ ձեռքերն են շփում, թե իբր ժողովրդավարական տարրեր ուժերի միջև պատակտում կա: Կուզե՞նայի լսել Ձեր կարծիքը այդ մասին:

Վ. ՍԻՐԱԴԵՂՅԱՆ. Ինչ վերաբերում է ձեր երկրորդ հարցին, ապա ես այնպիսի տպավորություն չունեմ, որ ԱԽՄ-ը եւ ՀՀԸ-ն երբևէ մեկ ճակատ են կազմել, մի ընդհանուր գիծ են ունեցել, չնայած ընտրություններից ասաջ կարծես թե այդպես էր: Համեմայնողբա, նրանք ժողովրդավարական ուժերի մեր հրապարակած ցուցակով ընտրվեցին: Փաստորեն, խորհրդարանի ընտրությունները կուսակցական համակարգով եղան՝ կոմունիստական եւ ՀՀԸ, բայց ընտրվելուց հետո տարանջատվեցին չորս, հինգ կուսակցական խմբեր:

Այդպիսի ընդհանուր ճակատ չի եղել. ԱԽՄ-ը միշտ ունեցել է իր անհամբեր գիծը, ՀՀԸ-ն՝ իր, որը երուպայում անվանում են «հանգիստ ուժ», պետականության հաստատման գիծը եւ հիմա էլ այդ ըսկզբունքին է մնում: ԱԽՄ-ը երբեք աչքի չի ընկել համբերությամբ, սառնասրտությամբ եւ ողջախոնությամբ: Հիմա էլ պարզապես շարունակում են այն գործը, ինչ որ անում էին ընտրություններից ասաջ եւ ընտրություններից հետո: □

ՎՐԱՍՏԱՆԸ ԶԿԵԱՐԿԵՑ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ

ՄՈՍԿՎԱ, 2 ապրիլի, 1991
Մեր հատուկ բողոքից Հ. ԱՍԱՏՐՅԱՆ

«Համաձայն» էք, որ վերականգնվի Վրաստանի պետական անկախությունը 1918-ի մայիսի 26-ի անկախության ակտի հիման վրա»: այս հարցին պատասխանեցին հանրապետության ղեկավարը Եմեկել Մոսկովաձե, որից «այո» ասացին 98,9, «ոչ»՝ 0,53 տոկոսը:

Հանրաքվեն կազմակերպված անցավ ոչ միայն հանրապետությունում, այլև միության երկու խոշոր՝ Սոսկվա եւ Լեխնգրադ քաղաքներում: Ինչպես մեկ տեղեկացրեց Մոսկվայում Վրաստանի կառավարության մշտական ներկայացուցիչ տեղակալ Կախա Լոմաշան, մայրաքաղաքում ժամանակավոր բնակվող վրացիները նույնպես ակտիվորեն մասնակցեցին քվեարկությանը: Տեղադրված երեք քվեատուփերում՝ «Թրիլիսի», «Սուխումի» եւ «Լրայույի», գտնվեց 2108 քվեաթերթիկ, որոնցից 2089-ի պատասխանը «այո» էր, 5-ը՝ «ոչ», իսկ 14-ը ճանաչվել էին անվավեր:

Հանրաքվեի ակտիվորեն մասնակցել է նաև հանրապետության ոչ վրացի բնակչությունը: Սրանց համար նախապատրաստվել են մայրենի լեզուներով քվեաթերթեր, այդ թվում ռուսերեն, հայերեն, ադրբեջաներեն, հուներեն:

Ապրիլի 1-ին, ուշ երեկոյան, հայտնի դարձան նաև հանրաքվեի շրջանային արդյունքները: Այդ թվում հայաշատ շրջաններում: Ախալքալաքում՝ 90 տոկոս մասնակցներից 97,1 տոկոսը՝ «այո», 1,73-ը՝ «ոչ», Ախալցխայում՝ 94,36 մասնակցներից 99,08 տոկոսը՝ «այո», 0,54-ը՝ «ոչ», Լիկոմիդղայում (Նախկին Բոգոտովկա)՝ 80,32-ից 91,2 տոկոսը՝ «այո», 6,6-ը՝ «ոչ»:

Ի դեպ, այս շրջանում որպես պաշտոնական դիտորդներ ներկա են եղել Հայաստանի երեք եւ Անգլիայի մեկ ներկայացուցիչ: Հայտնի է, որ հանրաքվեի անկախ մասնակցել են խորհրդային եւ արտասահմանյան տասնյակ լրագրողներ, ներկայացուցիչներ, դիտորդներ հարեան հանրապետություններից, Մերձբալթիկայից, ԱՄՆ-ից, Անգլիայից, ԳՅԴ-ից եւ այլն: □

ԱՐԽԱՋԻԱ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՔԿԵՆԵՐԻ ՀԱԿԱԳԻՐ ԱՐԳՈՒՆԵՆԵՐԸ

Արխալիայում հանրապետական հանրաքվեի արդյունքներն ուղղակի հակադիր էին համամիութենական հանրաքվեի արդյունքներին: Մարտի 17-ին Արխալիայի բնակչության մեծամասնությունը քվեարկեց վերանորոգված ֆեդերացիայի կողմ, մարտի 31-ին ընտրողների ամբողջ թվի 58 տոկոսը կողմ էին Վրաստանի անկախության վերականգնմանը:

Արխալիայում հանրապետական հանրաքվեի մասնակցեցին ընտրողների միայն 60 տոկոսը: Արխալիայի բնակչությունը եւ նրանք, ովքեր աշակցում են Արխալիայի ժողովրդական ֆորումի հայացքներին, բոլորի ենթարկեցին հանրապետական հանրաքվե: Այսպես, Օչամչիրի շրջանի 38 ընտրամասերից գործում էին միայն 21-ը:

Հանրապետական հանրաքվեն վերահսկվում էր ավելի քան 20 արտասահմանյան դիտորդների կողմից, այն ժամանակ, երբ Միութենական անց էր կացվում միայն Արխալիայի իշխանությունների վերահսկողության տակ:

ՀԱՆՔԱՓՈՐՆԵՐԻ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ ԵՐԿՐԻ ՎԱՐՉԱԳԵՏԻ ՀԵՏ

Ապրիլի 2-ին Կրեմլում սկսվեց ԽՍՀՄ վարչապետ Վալենտին Գավրիլի հանդիպում հանրապետությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցում են մոտ 400 հանրապետությունների բոլոր առիարդյունաբերության շրջաններից: Ինչպես ըստ պատմում է, հանրապետությունները վարչապետին ներկայացրին իրենց պահանջները, որոնք բարձրացվել էին գործադրության ժամանակ: Մարտի 2-ի տվյալներով միայն Ռուսաստանում գործադրու էին հայտարարել 72 հանք: Ուկրաինայում չէին աշխատում 48-ը:

ԼՂԻՍ. ԸՍՏ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՆՎԱԾ ԵՆ ԵՄ ԵՐԿՈՒ ԳՈՒԿԻ

Այսպես հանգստյան օրերին հարձակումներ են եղել Լեռնային Ղարաբաղի հայկական գյուղերի վրա: Ընդ որում՝ գյուղերից մեկում սպանվել է կաթի ֆերմայի պահակը: Երկրորդին ասեւանգել են, հետագայում՝ նույնպես սպանել: Գյուղերից եւ ֆերմաներից գողացվել են մեծ քանակությամբ անասուններ:

Երկուշաբթի օրը Լեռնային Ղարաբաղում տարածվեց շրջանի արտակարգ դրության պարետ գեղապետ Վալենտին Ժուկովի դիմումը: Այստեղ կոչ էր արվում մարտի եւ ԼՂԻՍ-ում, բոլոր օրինական միջոցներով կապահովել գյուղատնտեսական աշխատանքների անկախությունը, վճարել հակահարված կտան բոլոր այն ծայրահեղականներին, ովքեր կփորձեն ապակառուցանել վիճակը շրջանում:

Դիմումում ուղղակիորեն ահաջարկվում է գյուղատնտեսական լարված աշխատանքների ընթացքում երկկողմանի մարտադրում հայտարարել բառություններին: Իրենց հերթին, ԽՍՀՄ ներքին գործերի կոմիտեից, որոնք իրականացնում են արտակարգ դրությունը ԼՂԻՍ-ում, բոլոր օրինական միջոցներով կապահովեն գյուղատնտեսական աշխատանքների անկախությունը, վճարել հակահարված կտան բոլոր այն ծայրահեղականներին, ովքեր կփորձեն ապակառուցանել վիճակը շրջանում:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԵԹԻԱՅՈՒՄ ՄՏՅՎԵԼՈՒ Է ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Երկուշաբթի օրը ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ընդունեց որոշում Հարավային Օսեթիայում տիրող իրավիճակի մասին, որում ԽՍՀՄ պրեզիդենտին առաջարկվում է մղտցնել արտակարգ դրությունը: Որոշման համաձայն ԽՍՀՄ պրեզիդենտը պետք է դիմի Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահությանը նրա համաձայնությունը ստանալու համար: Մերժվելու դեպքում ԽՍՀՄ պրեզիդենտը գործում է ինքնուրույն, հետո այն դեմ Միության Գերագույն խորհրդի նստաշրջանի քննարկմանը: Որոշումը նախատեսում է նաև Հարավային Օսեթիայում կատարված հանցագործությունների հետաքննությունների անկախություն, վնասի հատուցման եւ փոխհատուցումների վաճառման կարգի սահմանում: Նախատեսված է օգնություն ցույց տալ փախստականներին մշտական բնակության վայրերը վերադառնալու հարցում:

Ա. ԽԱՐԱՏՐԳԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԵՃ ՀԱՄԵՐԳԱՄՐԱՅ



ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՐԳ

Այսօր, ապրիլի 3-ին
Մասնակցում են՝
«ԻԿԱՐ» կամերային նվագախումբ
գեղարվեստական ղեկավար՝
ՎԻԿՏՈՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. Սպենդիարյանի անվան
օպերայի եւ բալետի
պետական ակադեմիական թատրոնի
կամերային նվագախումբ
գեղարվեստական ղեկավար՝
ՎԻԼԵՆ ՉԱՐՉՈՂՅԱՆ
Կոմիտասի անվան երաժշտանոցի
օպերային ստուդիայի երգչախումբ
գեղարվեստական ղեկավար՝
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՐԶՈՅԱՆ
Մենակատարներ՝
Արաքս Մանասիրյան
Նոնա Մելքոնյան
Գոռ Արսենյան
Վալերի Հարությունյան
Վաղարշակ Օհանյան
Ռուբեն Ղազարյան
Արեգ Հովհաննիսյան
Ծրագրում՝
ԲԱՆ, ՄՈՑԱՐՏ, ԿՈՍՏԱՍ
Սկիզբը՝ ժ. 19.30-ին:
Տոմսերը վաճառվում են:

«Սոյուզպեչատ»-ի բոլոր բաժանմունքներում եւ փոստատներում սկսվել է «ԱԶԳ» թերթի բաժանորդագրությունը: Թերթը լույս է տեսնում շաբաթական երկու անգամ:

ԴԱՄԻՉ՝ 69149
1 ամիս՝ 1ռ. 30կ.
12 ամիս՝ 15ռ. 60կ.

ՀԱԶՈՐԳ ամսից թերթն ստանալու համար պետք է բաժանորդագրվել մինչև ընթացիկ ամսվա 15-ը:

ԲԱՃԻ ԱՅԳ, ԷՆՈՐՅԱ «ԱԶԳ»-ը այս տարվա մեջ դառնալու է ԱՄԵՆՈՐԾԱ: Մինչ այդ բաժանորդագրվածների համար բաժանորդագիրը չի փոխվի: